

## Առաջարկություններ

### ՀՀ-ում գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման ծրագրի

2016 թվի նոյեմբերի 2-ին ՀՀ Գյուղատնտեսության նախարարին կից հասարակական  
խորհրդում ներկայացնելու համար

Հրաչիկ Ջավադյան

**ՀՀ-ում գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման ծրագրի  
անհրաժեշտությունը**

ՀՀ-ում ագրարային բարեփոխումներից հետո ենթադրվում էր, թե սեփականատեր դարձած գյուղացին կարող էր իրականացրած գործունեության ընթացքում հաղթահարել խոչընդոտները և ինքնուրույն լուծել արտադրական, մասնագիտական, կազմակերպական, կառավարման, արտադրանքի իրացման խնդիրները և կոմնորոշվել շուկայական անկանխատեսելի միջավայրում: Կյանքը ցույց տվեց, որ դա այնքան էլ իրատեսական չէր:

Ոչ միայն չպահպանվեցին ստեղծված մակարդակները, այլ առաջ եկան նոր խնդիրներ հողօգտագործման, հողի շուկայի ձևավորման, գյուղատնտեսական արտադրա-տեխնիկական ծառայություններից օգտվելիս մատչելիության, ֆինանսական ապահովածության, անասնաբուժության, բույսերի պաշտպանության, սերմնաբուծության և տոհմնաբուծության, արտադրանքի իրացման, գյուղական բնակավայրերում այլ ընտրանքային զբաղվածության, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտում ապահովագրության ներդրման ուղղությամբ գործող մեխանիզմների մշակման ու իրականացման անհրաժեշտությամբ: Մեր խորին համոզմամբ դրա հիմնական պատճառը հստակ, համակարգված ու բազմակողմանի հիմնավորված ծրագրի բացակայությունն էր, որը պետք է զուգակցվեր կոոպերացման գործընթացին ուղղորդված պետական քաղաքականությամբ:

Այս առումով գյուղատնտեսության ոլորտում առկա խնդիրների լուծմանը միտված քաղաքականության հիմքում դրվեց **կամավորության** սկզբունքի վրա ձևավորվող **կոոպերատիվների** և կազմակերպական այլ միավորումների ձևավորման և գործունեության ծավալման աջակցությունը, քանի որ միայն այս դեպքում հնարավոր կլիներ նախօրոք մշակել քայլերը և կոնկրետ իրավիճակներից ելնելով իրականացնել համապատասխան միջոցառումներ խնդիրների լուծման ուղղությամբ:

Ագրարային քաղաքականության մշկման և իրականացման պատասխանատուներին և ոլորտի խնդիրներով մտահոգված մասնագետներին հնարավորություն է տրված արագացնելու կոոպերատիվ շարժման ընթացքը, մասնակիցն և աջակիցը լինելու երկրի համար խիստ կարևոր գործընթացին, ներկայացնելու իրավիճակի բարելավման առաջարկներ:

Կոոպերացումը շարունակական և տնտեսական կարևոր գործընթաց է, որի կայունության ապահովմանն ու աջակցությանը ներկայումս ուղղված է պետության նպատակային քաղաքականությունը, որի արդյունավետությունը պայմանավորված կլինի **գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման ծրագրի** հիմնավորված մշակմամբ ու հետևողական իրականացմամբ:

## Իրավիճակը

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ 2012 թվականից գյուղատնտեսությունը հայտարարվել է **գերակա** ոլորտ, որի զարգացման ռազմավարության **աստաջնահերթություններում** նախապատվությունը տրվել է գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծմանը:

Գյուղատնտեսության ոլորտի պետական քաղաքականության հիմնական ուղենիշերը և դրույթները մշակված և ներկայացված են ՀՀ կառավարության ծրագրում, ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2015-2025թթ. կայուն զարգացման ռազմավարության ծրագրում և ՀՀ գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ մշակված և 2015 թվականի դեկտեմբերի 21-ին ընդունված «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքում:

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության նոր ծրագրով 2017 թվականից սկսած նույնպես նախատեսվում է .

«Գյուղատնտեսական տնտեսությունների կոոպերացիաների խթանման ուղղությամբ միջոցառումների իրականացում», «կոոպերատիվների անդամ տնտեսություններում կաթի արտադրության ծավալների խթանման և որակական հատկանիշների բարելավման համար կոոպերատիվներին հավաքման սառնարանային կետերի և վերամշակման արտադրամասերի կառուցման աջակցություն», «գյուղացիական տնտեսությունների համար մասնագիտական դասընթացների կազմակերպում», ապա հաշվի առնելով կառավարության պատրաստակամությունը, պետք է ներկայացնել բոլոր բաղադրիչներով ապահովված ծրագրի նախագիծ:

ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2015-2025թթ. կայուն զարգացման ռազմավարության ծրագրում ծավալուն ձևով ներկայացված են հիմնական մոտեցումները և ուղղությունները գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման, խթանման և աջակցության վերաբերյալ:

Գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման իրավական հիմքերը ամրագրված են սահմանված են 2015թ-ի դեկտեմբերին ընդունված «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքով, որը հնարավորություն է տալիս կարգավորելու գյուղատնտեսական ապրանք արտադրողների և պետության միջև եղած հարաբերությունները:

Նշված փաստաթղթերը ընդգրկում են անհրաժեշտ դրույթներ գյուղատնտեսության կոոպերացման օրենսդրական հիմքերի ապահովման, գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման խթանման, գործունեության արդյունավետության ապահովման, գործարար և ներդրումային միջավայրի բարելավման, հանրապետության պարենային անվտանգության մակարդակի բարձրացման, գյուղատնտեսական կոոպերացիայի պետական քաղաքականության հստակեցման ուղղությամբ:

Գյուղատնտեսությունում կոոպերատիվների ստեղծման ուղղությամբ 1990- ական թվականներից սկսած տարբեր ծրագրերով ՀՀ-ում գործող/ դոնոր կազմակերպությունների գրասենյակների, ՀՀ գյուղ. նախարարության խորհրդատվական կառույցների, կրթական ու գիտական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների միջոցով կատարվել են ծավալուն աշխատանքներ, որոնց կողմից կուտակված դրական փորձը և արդյունքները կարելի է կիրառել նախագծի մշակման ընթացքում :

Գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման գործընթացը սկսել է ակտիվանալ վերջին տարիներին:

Բավական է նշել, որ վերջին տասիներին ձևավորված շուրջ 306 սպառողական կոոպերատիվներից՝ գյուղատնտեսական բնույթ ունեն 225-ը, որտեղ մեկ կոոպերատիվին ընկնում է միջին հաշվով 97 գյուղացիական տնտեսություն, որը կազմում է գ/տ ընդհանուր թվաքանակի 6,4%-ը, ապա պարզ է դառնում, որ նման տեմպերով համապատասխան ակնկալիքներին հասնելը դառնում է անիրական:

Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակությանն ծրագրի շրջանակներում մինչև այժմ ստեղծվել և գործում են արտոգտագործողների 153 սպառողական կոոպերատիվներ:

2015 թվականի հունվարից մեկնարկել է ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից իրականացվող և Եվրոպական միության և Ավստրիական զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղի զարգացմանն ԵՀԳԳՁԾ (ENPARD) եռամյա ծրագիրը, որի նպատակն է ՀՀ վեց մարզերում գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծմանը, ինչպես նաև գործող կոոպերատիվների հզորացմանը:

Չնայած ձեռնարկած քայլերին, դեռևս առկա են օրենսդրական կարգավորման և գործնականում դրանց իրականացման մի շարք խնդիրներ ու խոչընդոտներ:

- Հաճախ կոոպերատիվներում անդամագրվում են մարդիկ, որոնք դժվարությամբ են համակերպվում կոլեկտիվի հետ, չունեն կոլեկտիվ մտածելակերպ, գործունեության ընթացքում չեն համակերպվում հանդիպող բարդ իրավիճակների հետ, որը բացասաբար է անդրադառնում կոոպերատիվի գործունեության վերջնական արդյունքների վրա, ինչը վերջին հաշվով հանգեցնում է նրա լուծարմանը:

- Դեռևս համընդհանուր բնույթ է կրում բոլոր գյուղաբնակների մոտ թույլ տեղեկացվածությունը և իմացությունը կոոպերատիվների առավելությունների, շուկայական գների, իրացման լավագույն ուղիների առաջավոր փորձի և նոր տեխնոլոգիաների վերաբերյալ: Գյուղացիական տնտեսությունները հիմնականում ցանկություն ունեն անդամագրվելու կոոպերատիվներում, սակայն կոոպերացման վերաբերյալ նրանց գիտելիքները բավարար չեն, որի հաղթահարման միակ միջոցը համապատասխան դասընթացներն կոոպերատիվների կազմակերպման հիմնական թեմաներով սեմինարների և դասընթացների կազմակերպումն է, որը կնպաստի են կարողությունների հզորացմանը և ինքնուրույն որոշումների կայացմանը:

- Դիտարկումները ցույց են տալիս, որ առկա են բազմաթիվ դեպքեր, երբ որոշ բավարար մակարդակով չեն տիրապետում կոոպերացման դրույթներին և նրանց անհիմն տեսակետները ոչ միայն նպաստում են սկսված գործընթացին, այլ վեր են ածվում արգելքների:

- Քանի որ կոոպերատիվների կազմակերպման հարցերով զբաղված են տարբեր կազմակերպություններ, որոնց մասնակիցները յուրովի են մեկնաբանում և ներկայացնում կոոպերատիվների դրույթները, ապա առաջարկում ենք առանց հետաձգելու համակարգել նման ծրագրերը և դրանց իրականացման համար ներգրավվել ավելի փորձառու և գործիմաց, ոլորտին քաջատեղյակ մասնագետներ, համատեղ ուժերով առաջ տանել այս

գործընթացը: Դիշտ կլինեք, որ մման դեպքերում տվյալ անձիք ունենային մման գործընթացում դասընթացներ վարելու թույլտվություն:

- Ապահոված չէ միատեսակ իրավական դաշտ համանման գյուղատնտեսական արտադրանք արտադրող սուբյեկտների համար ( հարկային, սոցիալական...)

- Ձևավորված մեխանիզմները բավարար չեն գյուղատնտեսական ապրանք արտադրողների, վերամշակող ընկերությունների և սպառողների կապերի ամրապնդման համար: Հաճախ դրանք ձևավորվում են տարերայնորեն և կայուն բնույթ չունեն: Անհրաժշտ է մշակել հստակ մեխանիզմներ, որպեսզի գյուղացիական տնտեսությունները, վերամշակող և սպառող առևտրային կազմակերպությունները գտնվելով համագործակցության նույն համակարգում, ունենալով միասնական շահեր, պետք է լրացնեն և աջակցեն միմյանց:

- Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին ՀՀ օրենքում ընդգծված է /Հոդված 28/ կոոպերատիվի և կոոպերատիվների միությունների ու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները, Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է կոոպերատիվի և դրանց միությունների իրավունքները և պաշտպանում նրանց օրինական շահերը ու պետությունն աջակցում է կոոպերատիվների ստեղծմանը, զարգացմանը և տնտեսական ինքնուրույնության ամրապնդմանը:

Անցյալում ներկայացված առաջառաջարկներից մեկն ընդունվել է և այդ նպատակով գյուղատնտեսության նախարարության կազմում ստեղծվել է Գյուղատնտեսական կոոպերացիայի աջակցության բաժին: Սակայն այստեղ նույնպես առկա են խնդիրներ ստեղծված միավորի մասնագետների կարողությունների ուժեղացման և մասնագետներով համալրման հետ: Այս հարցը պետք է կարգավորել ամբողջ հանրապետության մասշտաբով՝ սկսած ուսումնական հաստատություններից մինչև գյուղացիական տնտեսություններ:

- Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին ՀՀ օրենքում /Հոդված 28/ սահմանված է, որ **գյուղատնտեսական կոոպերատիվների աջակցությունն իրականացվում է պետական ծրագրով, որի մշակման և հաստատման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ Ծրագիր):** Այս գործընթացին անհրաժեշտ է արագ ընթացք տալ , ձևավորել ծրագրի մշակման պատասխանատու խումբ:

### **Առաջարկություններ՝**

1. «Գյուղատնտեսական կոոպերատիվների մշակմանն առաջին փուլում անհրաժեշտ է կատարել բազմակողմանի վերլուծություն կազմակերպված կոոպերատիվների և նոր կոոպերատիվների կազմակերպման նպատակահարմարության վերաբերյալ:
2. Գյուղատնտեսության կոոպերացման պետական նպատակային ծրագրում ընդգրկել տեղեկատվության ապահովման և գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվածների իրագեկվածության միջոցառումներ: Ըստ հետազոտությունների արդյունքների յուրաքանչյուր մարզի մասնագիտացմանը համապատասխան ընտրել և պետական աջակցությամբ ստեղծել 2 կոոպերատիվներ, դրանք դարձնելով ցուցադրական կենտրոններ :
3. Գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման սկզբնական փուլում հիմնական դժվարությունները պայմանավորված են ֆինանսական միջոցների սղությամբ և հաճախ դառնում են կոոպերատիվների ձևավորման որոշիչ գործոնը:

Այս առումով վերջին տարիներին գյուղական վայրերում տարաբնույթ դրամաշնորհային ծրագրեր են իրականացվել: Դրական արդյունքների հետ մեկտեղ դեռևս բավարար չեն դրանց ազդեցությունները՝ հետագա գործունեության շարունակականության ապահովման առումով: Անհրաժեշտ է դրանք համակարգել և մեր կարծիքով ճիշտ կլինի, որ դոնոր կազմակերպությունների միջոցով հանրապետության գյուղատնտեսության աջակցման նպատակով տրամադրվող միջոցները (դրամաշնորհները), առաջին հերթին ուղղվեն կոոպերատիվների ձևավորմանն ու զարգացմանը:

4. Տարիներ շարունակ տարբեր աղբյուրներից ստացված միջոցների հաշվին ՀՀ-ում ձևավորվել են տարաբնույթ կոոպերատիվներ, որոնց որոշ մասն այսօր չեն գործում: Եվ դա բնական է, քանի որ դրանց կազմակերպման ժամանակ հաճախ խախտվել են ձևավորման սկզբունքները, հաշվի չեն առնվել տնտեսական նախադրյալները և զարգացման հնարավորությունները: Իսկ այն կոոպերատիվները, որոնք ձևավորվել են ճիշտ հիմքերի վրա և գնահատվել են նրանց ռեսուրսները, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների ներդրման, փոխադարձ օգնության տրամադրման հնարավորությունները, ապա դրանք այսօր առկա են և արդյունավետ գործում են ՀՀ Վայոց Ձորի, Արագածոտնի, Տավուշի, Արմավիրի, Շիրակի և Սյունիքի մարզերում: Դրանց փորձի տարածումը կարևոր խթան կհանդիսանա նոր կոոպերատիվների ամուր հիմքերի ձևավորման և հետագա զարգացման համար:
5. Գյուղատնտեսական գործունեության արդյունավետության ապահովման գերխնդիրը արտադրանքի իրացման ճիշտ ուղիների ընտրությունն է, որտեղ առկա են կանոնակարգման բազմաթիվ խնդիրներ: Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ներքին շեմի քվտանների սահմանման, պետական երաշխավորված պատվերների տրամադրման, պայմանագրային հարաբերություններում պարտականությունների և պատասխանատվության դրույթների հստակեցումը կհանգեցնի վստահության ուժեղացմանը և գյուղատնտեսական կոոպերատիվների շահագրգռվածության բարձրացմանը:
6. Կոոպերատիվները լուծում են պետական կարևորություն ունեցող՝ տնտեսական, սոցիալական, բնապահպանական խնդիրներ, հետևաբար դրանց լուծման համար արտոնությունների տրամադրումը և արդյունավետ գործելու միջավայրի առաջնահերթ նշանակություն ունեցող խնդիր է, որը օրենսդրական կարգավորման կարիք ունի:
7. Առաջարկվող միջոցառումների ցանկը, որը շահագրգիռ խմբերի հետ համատեղ քննարկելու արդյունքում կարելի է մշակել ՀՀ-ում գյուղատնտեսության կոոպերացման զարգացման ծրագրի նախագիծը:

**Ցանկ**  
**«ՀՀ-ում գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման ծրագրի միջոցառումների»**

N	Միջոցառումը	Նպատակը	Ակնկալվող արդյունքի չափորոշիչը	Արդյունքի գնահատման ցուցանիշները	Իրականացնողները	Ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրները
1.	Գյուղ. նախարարության կազմում գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցող միավորի ստեղծում հիմնադրամի կարգավիճակով: Ծրագրի իրականացնող կազմակերպության ընտրություն:	Համակարգել և աջակցել ՀՀ գյուղ. կոոպերատիվներին	Իրականացվող գործունեության բարելավում և հստակեցում, փորձառու կազմակերպության ընտրություն	Կանոնադրության հստակեցումը փորձառու մասնագետների թիվը, տարեկան և ռազմավարական միջոցառումների մշակումները, ծրագրի տեխնիկական առաջադրանքի մշակում	–	2016	–
2.	ՀՀ-ում անկա կոոպերատիվների փորձի ուսումնասիրում և տարածում	Առաջավոր փորձ ունեցող կոոպերատիվների ընտրություն, լավագույն արդյունքների ամփոփում	Բարձր արտադրական ցուցանիշներ, կազմակերպված գործունեություն, անդամների իրազեկվածություն	Արտադրության ծավալների փոփոխություն, միավորի հաշվով ծախսերի կրճատում, ապրանքայնության աճ, անդամների եկամուտների աճ, տեղեկությունների պատրաստում	Գյուղ. նախ. ԳԱՄԿ Հ/կ-ների զիտ. կազմակ.	2016	Պետ. բյուջե դրամաշնորհների սեփ. աղբյուրներ
3.	Յուրաքանչյուր մարզում ընտրել 2 համայնք, ստեղծել	Նպաստել փորձնական	Օրինակելի կոոպերատիվների	Կոոպերատիվների թիվը, ընդգրկված	–	2017	–

	տարբեր մասնագիտությամբ երկու կոոպերատիվ	կոոպերատիվների ստեղծմանը	ստեղծում և գիտելիքի տարածման խորհրդատվության բարելավում	անդամների թիվը, գույքը, միջոցների կազմը, ֆինանսական ռեսուրսները, մասնագետների թիվը և որակավորումը			
4.	Յուրաքանչյուր մարզում ստեղծել 1 վարկային ընկերություն (կոոպերատիվ) գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողներին աջակցելու համար	Նպաստել վարկային ռեսուրսների և կոոպերատիվների ֆին. ապահովմանը	Օրինակելի ֆինանսական կառույցի ստեղծման հիման վրա մատչելի վարկերի տրամադրում	Կոոպ. թիվը, կոոպ. անդամների թիվը, կոոպերատիվի ռեսուրսների ծավալը	–	2017	–
5.	Կազմակերպել ուսուցողական դասընթացներ կոոպերատիվի շահառու անդամների համար	Նպաստել շահառու անդամների կարողությունների հզորացմանը	Նոր գիտելիք գյուղ. կոոպերատիվների կազմակերպման և կառավարման վերաբերյալ	Մասնակիցների թիվը, կոոպերացման դրույթներին տիրապետելը	–	2017	–
6.	Կազմակերպել դասընթացներ ծրագրին մասնակցողների և ուսուցանողների համար	Նպաստել ծրագրի մասնակիցների և ուսուցանողների կարողությունների հզորացմանը	Նոր գիտելիքներ գյուղ. կոոպերատիվների գործունեության վերաբերյալ	Ուսուցանողների թիվը կոոպերացման դրույթների իմացությունը և արդյունավետ մատուցումը	–		
7.	Սպասարկող, մատակարարող կազմակերպությունների ներկայացուցիչների համար կազմակերպել դասընթացներ	Նպաստել կազմակերպությունների կազմակերպությունների ներկայացուցիչների	Նոր գիտելիքներ «Գյուղ. կոոպ. մասին» օրենսդրության վերաբերյալ	Դասընթացներին մասնակցածների թիվը և ՀՀ գյուղ. կոոպերացման	–	2017	–



		կարողությունների հզորացմանը		օրենսդրությանը ծանոթ լինելը			
8.	Ծրագրում ընդգրկված կոոպերատիվների կարողությունների հզորացում, նյութա-տեխնիկական աջակցություն	Նպաստել կոոպերատիվների ներուժի հզորացմանը	Արտադրատնտեսական ցուցանիշների և անդամների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում	Արտադրության ծավալների աճ, բերքատվության և մթերատվության ցուցանիշների բարձրացում, եկամուտների աճ, միավորի հաշվով ծավալի կրճատում	–	2016-2018	–